2018-2019 **թվականներին առողջապահության նախարարության ծրագրերը**, **բարեփոխումները հուլիսի** 1-**ի դրությամբ**

1. Բարձրացվել են առաջնային օղակի ավելի քանի 10000 բուժաշխատողի աշխատավարձերը՝ գրեթե 30%-ի չափով:

2. Բարձրացվել են պետպատվերի միջոցներից հիվանդանոցային օղակի բուժաշխատողների վարձատրության համամասնությունները:

3. Վերանայվել է «Stent for Life» ծրագիրը՝ ոչ դեղապատ ստենտի փոխարեն տեղադրվում է դեղապատ ստենտ: Իջեցվել են վճարովի ստենտավորման գները ավելի քանի 250000 դրամի չափով:

4. Փետրվարի 1-ից մեկնարկել է սուր իշեմիկ ինսուլտի բուժման ծրագիրը, որի արդյունքում 156 քաղաքացի պետպատվերի շրջանակներում ստացել է անվճար բուժօգնություն:

5. Հայաստանում ներդրվել է սանիտարական ավիացիայի ծառայությունը, որը մեկնարկել է ապրիլի 7-ից: Հեռավոր մարզերից արդեն իսկ տեղափոխվել է 29 հիվանդ:

6. Չարորակ հիվանդությունների վիրահատական բուժումը հանվել է համավճարային եղանակով փոխհատուցվող ծառայություններից, և այն բացառապես իրականացվում է պետական պատվերի շրջանակներում ամբողջ բնակչության համար: Արդեն իսկ կատարվել է 1419 վիրահատություն:

7. «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով շահառուների ցանկում ընդգրկված շուրջ 230,0 հազար քաղաքացի սկսել է օգտվել բարելավված հիվանդանոցային բուժօգնության փաթեթից՝ ներառյալ 18 տեսակի նորագույն թանկարժեք ծառայությունները:

8. Ավելացել են ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծախսերը: 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց, մինչև 7 տարեկան երեխաների, մինչև 18 տարեկան սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված երեխաների, նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց ստոմատոլոգիական բուժօգնությունը 2019-ից կազմակերպվում է անվճար՝ նախկինում գործող համավճարային սկզբունքի փոխարեն: Անվճար բժշկական օգնություն են ստանում նաև ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 30.01 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող բոլոր նպաստառուները:

9. Ներդրվել է պետպատվերով մատուցվող ծառայությունների մոնիտորինգի առցանց համակարգը:

10. Առաջին անգամ Հայաստանում իրականացվել է երեխայի ոսկրածուծի փոխպատվաստում: Ներդրվել է մեծահասակների ոսկրածուծի փոխպատվաստման պետպատվեր:

11. Մարզերի կադրային ներուժը համալրելու նպատակով՝ շուրջ 40%-ով աճել է նպատակային կլինիկական օրդինատուրայի տեղերը՝ 35-ից հասցնելով 50-ի:

12. Թարմացվել է շտապօգնության ծառայության ողջ ավտոպարկը՝ 200 մեքենաներով:

13. Շահագործման են հանձնվել Վանաձորի, Սևանի և Արտաշատի նորակառույց բժշկական կենտրոնները, որտեղ տեղադրվել են նաև համակարգչային տոմոգրաֆիայի ժամանակակից սարքեր: Շուտով կշահագործվի նաև ժամանակակից մագնիսառեզոնանսային տոմոգրաֆ Գյումրիի բժշկական կենտրոնում: Ընթացքում են Մարտունու և Վայոց ձորի բժշկական կենտրոնների կառուցման աշխատանքները:

14. 2019 թվականի համար պետական բյուջեով ձեռք է բերվել թվով 14 անվանում հակաուռուցքային դեղեր՝ մանկական քիմիոթերապիայի համար, մնացած 9 անվանումը ձեռք բերելու համար հայտարարվել է մրցույթ:

15. Վերանայվել են ծննդատների մակարդակները, ինչը հնարավորություն կտա բարելավել մատուցվող ծառայությունների որակը: Էականորեն ավելացվել են ծննդօգնությանը հատկացվող միջոցները:

16. Պետական պատվերի միջոցները բաշխվել են համահարթեցման սկզբունքով: Մարզերին ցուցաբերվել է հատուկ մոտեցում:

17. Մարզերի և Երևան քաղաքի շուրջ 15000 բուժաշխատող իրավունք է ստացել օգտվելու սոցփաթեթից, որից այսօր օգտվում են պետական հիմնարկների աշխատակիցներն ու ուսուցիչները՝ բացառությամբ ամենամյա պարտադիր բուժզննության ծառայությունը:

18. Լրամշակվել է առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, ըստ որի՝ բուժաշխատողները, մատնահարդարները, ոտնահարդարները, դիմահարդարները և դաջվածքի մասնագետները վիրուսային հեպատիտ Բ-ից բացի կհետազոտվեն նաև հեպատիտ Ց-ի նկատմամբ:

19. Ներդրվել է բուժօգնության դեպքերի անհատական վարման համակարգ. քաղաքացու՝ հիվանդանոց դիմելու պահից սկսած դեպքը կլինի բժիշկ-փորձագետի հսկողության ներքո՝ մինչև բուժման ավարտը:

20. Սկսվել է համապարփակ բժշկական ապահովագրության ներդրման հայեցակարգի մշակումը:

21. Շտապօգնության ծառայության աշխատանքները բարելավելու և կանչերը հասցեական կազմակերպելու նպատակով մշակվել է բուժհաստատությունների վերակենդանացման բաժանմունքների մահճակալների մասին տեղեկատվության առցանց հասանելիության համակարգ:

22. Դեղերի օրենքից բխող 8 իրավական ակտ է ընդունվել, որոնց միջոցով կարգավորվում են դեղերի ներմուծման և արտահանման, գրանցման, կլինիկական հետազոտությունների, հետ կանչի և շրջանառության դադարեցման, պատշաճ արտադրական գործունեության և այլ մեխանիզմները:

23. Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մշակվել են մի շարք օրենսդրական նախաձեռնություններ, այդ թվում «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի նախագիծը, ալկոհոլի գովազդի սահմանափակման, ինչպես նաև առողջ սնուցմանն ուղղված օրենսդրական նախաձեռնությունները:

24. Վերսկսվել է բժիշկների ժամանակավոր ուղեգրման ծրագիրը և մարզերից ներկայացված հրատապ կադրային պահանջարկի դեպքում՝ Երևանից կարճ ժամանակահատվածով համապատասխան բժիշկ մասնագետներ կգործուղվեն մարզեր: Մեկ ամսվա ընթացքում արդեն իսկ 7 մասնագետ տարբեր ժամանակահատվածով գործուղվել են մարզեր՝ ըստ ներկայացված հրատապ պահանջարկի:

25. Առողջապահության նախարարությունը ձեռք է բերել էլեկտրոնային առողջապահության համար գնված հայկական արտադրության թվով 2420 դյուրակիր համակարգիչներ, որոնք բաշխվելու են բուժհաստատություններին: Դրանք թույլ կտան հեշտացնել պացիենտների տվյալների մուտքագրումը համակարգ:

26. Առաջին անգամ Հայաստանում կատարվել է կենդանի դոնորից լյարդի փոխպատվաստում, որի շնորհիվ փրկվել է 56-ամյա կնոջ կյանք:

27. Մեկնարկել է դեղերի կողմնակի ազդեցությունների հաղորդման բջջային հեռախոսի հավելվածը: Դեղազգոնության համակարգում անկյունաքարային գործունեությունը դեղերի կողմնակի ազդեցությունների հավաքագրումն է: Տվյալներն օգնում են բացահայտել դեղերի անվտանգությանը վերաբերող խնդիրները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ նպաստելով հանրային առողջության պահպանմանը և դեղաբուժության շրջանակներում պացիենտի անվտանգության ապահովմանը:

28. 2019 թվականի փետրվարից երկիրն անցել է կենդանի բերանային պոլիոմիելիտի պատվաստանյութից ինակտիվացված պատվաստումների փուլային փոխարինմանը՝ վեցավալենտ պատվաստումների մեկ դեղաչափի ներդրմամբ: Վերջինս կնպաստի պոլիոմիելիտի արմատական վերացման ռազմավարության պահանջների իրականացմանը, այն է՝ մինչև 2020 թվականն ապահովել պոլիոմիելիտի կենդանի պատվաստանյութի փուլային փոխարինումը պոլիոմիելիտի ինակտիվացված պատվաստանյութով:

29. Մոտ 400 անուն դեղ, որոնք անհասանելի էին անապահով ընտանիքների համար՝ հուլիսի 1-ից կտրամադրվեն անվճար: Այս արտոնությունից կօգտվի մոտ 200 հազար շահառու:

30. Մինչ այժմ պետական միջոցներով չտրամադրված Հեպատիտ Ց-ի բուժման համար անրհաժեշտ հակավիրուսային և հիպոֆիզային գաճաճություն ախտանիշ ունեցող աճի հորմոն դեղերը 2020 թվականից կհատկացվեն անվճար:

31. «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրում 0-18 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումն ամբողջությամբ կիրականացվի պետական պատվերի շրջանակներում, ինչպես նաև կփոխհատուցվի մինչև տարեվերջ կանխատեսվող դեֆիցիտը:

32. Սրտի վիրահատական ծառայությունների և նորագույն թանկարժեք այլ տեխնոլոգիաներով կատարվող բժշկական ծառայությունների գծով պետական պատվերի շրջանակներում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունք ունեցող շահառուների խմբերն ընդլայնվել են՝ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներ, ժամկետային զինծառայողների ընտանիքի անդամներ, մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքի անդամներ, զոհված զինծառայողների ընտանիքի անդամները ևս անվճար բուժում կստանան:

33. Արագ և որակյալ շտապ բժշկական օգնության ծառայություններ մատուցելու նպատակով հանրապետությունան տարածքում կավելացվի սպասարկող բրիգադների թիվը:

34. Գերժամանակակից սարքավորումներով կհագեցվեն «Սուրբ Աստվածամայր» ԲԿ մանկական նյարդավիրաբուժական և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ նյարդավիրաբուժական բաժանմունքները՝ բարձրացնելով մատուցվող ծառայությունների որակը միջազգային մակարդակի:

35. Նախատեսվում է իրականացնել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում թվով 10 բժշկական կենտրոնների վերակառուցման, 1 բժշկական կենտրոնի վերանորոգման, 3 բժշկական կենտրոնների մասնակի վերանորոգման, 2 բժշկական կենտրոնի կառուցման համար:

36. Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների համահարթեցման արդյունքում կբարձրանա մատուցվող հիվանդանոցային ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների աշխատողների աշխատավարձը, որը կնպաստի ոլորտում ստվերային գործունեության նվազմանը և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

37. ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնի» շենքային պայմանները կհամապատասխանեցվեն միջազգային ՋԴՓ ստանդարտներին, որպեսզի պետական կարիքների համար ձեռք բերվող դեղորայքը պահպանվի միջազգային ստանդարտներին համապատասխան պայմաններում: